

2. ՀՀ տարածքի 2003թ. հիդրոէրևութաբանական պայմանների համառոտ բնութագիր

ՀՀ տարածքում 2003թ. օդի ջերմաստիճանը նորմային (5.5°C) մոտ է եղել և կազմել 5.7°C , իսկ տեղումների տարեկան քանակը նորման (592 մմ) գերազանցել է 35 մմ-ով:

Հունվար և փետրվար ամիսները հանրապետության տարածքի գերակշռող մասում տաք են եղել՝ $1-3^{\circ}\text{C}$ -ով գերազանցելով ջերմաստիճանի նորման: Հունվարի առաջին օրերին դիտվել էր բավականին ցածր ջերմաստիճան: Յատկապես ցուրտ եղանակ էր հաստատվել Արարատյան դաշտում՝ -19 - -21°C , որը տվյալ ժամանակահատվածի համար $7-9^{\circ}\text{C}$ -ով նորմայից ցածր էր, իսկ հունվարի երրորդ և փետրվարի առաջին տասնօրյակներն առավել տաք են եղել: Հունվարի 30-31-ին հանրապետության հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան շրջաններում առավելագույն ջերմաստիճանը հասել է $17-22^{\circ}\text{C}$: Այդ օրերին նկատվել է նաև քամու ուժգնացում: Հունվարի 30-ին Մարտունիում (Գեղարքունիքի մարզ) դիտվել է ուժեղ քամի՝ մինչև 30 մ/վրկ պոռթկումով, վնասվել են էլեկտրահաղորդակցության գծերը:

Փետրվար ամսին տեղումների գումարը հանրապետության ամբողջ տարածքում նորմայից բարձր է եղել 20%-ով: Ամբողջ ամսվա ընթացքում առանց տեղումների եղանակ դիտվել էր միայն 6 օր: Փետրվարի 19-22-ին ամենուրեք ձյուն էր տեղացել առանց ընդհատումների: Երևանում 62 ժամվա ընթացքում անընդմեջ եկած տեղումների քանակը գերազանցել էր ամսական նորման 33%-ով:

Գարնանը նկատվել է եղանակի ծայրահեղ անկայուն ռեժիմ՝ օդի ջերմաստիճանի և տեղումների նշանակալի շեղումներով: Մարտ և ապրիլ ամիսները եղել են ցուրտ և խոնավ: Մարտ ամսվա միջին ամսական ջերմաստիճանը $2-3^{\circ}\text{C}$ -ով նորմայից ցածր է եղել, տեղումների քանակը գերազանցել է նորման 40%-ով: Առավել բարդ եղանակային պայմաններ են ձևավորվել (ձնառատ տեղումներ, ձնաբուք, քամու ուժգնացում) մարտի 19-ին և 26-ին: Ապարանում (Արագածոտնի մարզ) ամսի 19-ին 9 ժամ անընդմեջ ձյուն է տեղացել, ձնածածկությի բարձրությունը կազմել է 91 սմ: Մարտի 26-ին ամենուրեք ձյուն է տեղացել, Զերմուկում (Վայոց ձորի մարզ) 20 ժամ 30 րոպեի ընթացքում դիտվել է ուժեղ ձնաբուք, քամու արագությունը հասել է $15-16$ մ/վրկ, ձնածածկությի բարձրությունը՝ 118 սմ, տեսանելիությունը՝ 100-200 մ: Զերմաստիճանի կտրուկ նվազում դիտվել է մարտի Վերջին և ապրիլի սկզբին: Յյուսիսից սառը օդային հոսանքների ներթափանցման հետևանքով լեռնային և հյուսիսային նախալեռնային շոշաններում օդի ջերմաստիճանը նվազել է մինչև -18 - -25°C :

Ուժեղ ցրտերից հետո, որոնք դիտվել են ապրիլի առաջին օրերին (լեռնային շոշաններում՝ -11 - -16°C , հանրապետության հյուսիսային շրջաններում՝ մինչև -30°C), տեղի է ունեցել ջերմաստիճանի կտրուկ բարձրացում: Ապրիլի 5-6-ին միջին օրական ջերմաստիճանը բարձր է եղել այդ օրերի միջին բազմատարյան ցուցանիշներից $3-7^{\circ}\text{C}$ -ով, հովտային շոշաններում՝ $10-11^{\circ}\text{C}$ -ով: Սյունիքի հովտային և Արարատյան դաշտում առավելագույն ջերմաստիճանը հասել է $25-29^{\circ}\text{C}$: Այդ օրերին հանրապետության շատ շրջաններում դիտվել է ուժեղ քամի (15-17 մ/վրկ արագությամբ, մինչև 22 մ/վրկ պոռթկումով): Մարտունիում քամու արագությունը հասել է 29 մ/վրկ և նշանակալի վնաս է հասցել, ավերվել են տանիքները, էլեկտրահաղորդակցության սյուները, արմատախիլ են եղել ծառերը:

Մայիս և հունիս ամիսները բնութագրվել են եղանակի անկայուն ռեժիմով, հաճախակի անձրևներով, ամպրոպներով, որոնք ուղեկցվել են կարկուտով, քանու ուժեղացումով։ Մայիսի միջին ամսական ջերմաստիճանը նորմային մոտ էր եղել, իսկ տեղումների քանակը՝ նորմայից զգալիորեն ցածր։ Անբարենպաստ եղանակային պայմաններ են դիտվել Գորիսում (Սյունիքի մարզ), որտեղ մայիսի 7-ին ձյուն էր տեղացել և 9 ժամվա ընթացքում տեղումների քանակը կազմել էր 23 մմ, Աշոցքում (Շիրակի մարզ) մայիսի 20-ին ամպրոպից զոհվել է 1 մարդ։

Ամառը եղել էր համեմատաբար զով և խոնավ։ Յունիսի միջին ամսական ջերմաստիճանը 0.5°C -ով ցածր էր եղել նորմայից։ Ջերմաստիճանի նվազման հետևանքով հունիսի 6-7-ին և 25-26-ին լեռնային շրջաններում գետնամերձ շերտում դիտվել են ցրտահարություններ ($0\text{-}1^{\circ}\text{C}$ ՝ -2°C), որը ծայրահետ հազվադեպ երևույթ է այդ ամսվա համար (վերջին 100 տարվա ընթացքում հունիսի երրորդ տասնօրյակում ցրտահարություններ չեն դիտվել)։ Ցրտահարությունների հետևանքով վնասվել են գյուղատնտեսական մշակաբույսերը։

Յուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 0.4°C -ով ցածր էր եղել նորմայից։ Ամսվա երկրորդ կեսին դիտվել էր սառը օդային զանգվածների ներթափանցում ՀՀ տարածք։ Զաջուռում (Շիրակի մարզ) հուլիսի 18-ին 5 րոպեի ընթացքում տեղացել է 5 սմ տրամագծով ուժեղ կարկուտ և մեծ վնաս էր հասցվել գյուղատնտեսությանը։


Ջերմաստիճանի բարձր ֆոն հաստատվել էր օգոստոսի առաջին տասնօրյակում, առավելագույն ջերմաստիճանը մոտեցել էր այդ ժամանակահատվածի համար գրանցված առավելագույն բացարձակ արժեքին։ Ամռան վերջը եղել էր բավական զով և խոնավ։

Սեպտեմբեր ամիսը եղել էր բարենպաստ և ջերմաստիճանն ու տեղումները եղել են նորմային մոտ։


Յոկտեմբերը բնութագրվել էր անսովոր տաք եղանակով։ Միջին ամսական ջերմաստիճանը նորմայից բարձր էր եղել $2-4^{\circ}\text{C}$ -ով։ Ծատ շրջաններում առավելագույն ջերմաստիճանները մոտեցել են բացարձակ արժեքներին, իսկ իջևանում (Տավուշի մարզ) և Ղափանում (Սյունիքի մարզ)՝ 1°C -ով բարձր էր եղել նորմայից։ Ամսվա վերջին օրերին եղանակը կտրուկ ցրտել էր և մեծ քանակությամբ տեղումներ են դիտվել՝ 1 օրվա ընթացքում մոտավորապես 32-42 մմ (ամսական նորմայի 100-120%-ը)։

Նոյեմբեր և դեկտեմբեր ամիսները ջերմաստիճանային ռեժիմով նորմային մոտ եղել։

Օդի միջին ամսական ջերմաստիճանը, $^{\circ}\text{C}$



Տեղումների միջին ամսական քանակը, մմ



2003թ. ամսական և տարեկան միջին ջերմաստիճանի և տեղումների քանակի արժեքները և դրանց շեղումները նորմաներից 1961-1990թթ. նորմայից*

	Միջին ջերմաստի-ճանը, °C	Շեղումը 1961-1990թթ. նորմայից, °C	Տեղումների քանակը, մմ	Շեղումը 1961-1990թթ. նորմայից	
				մմ	%
Յունվար	- 5.1	1.7	24	- 11	68
Փետրվար	- 4.9	0.9	50	9	121
Մարտ	- 3.7	- 2.3	83	31	159
Ապրիլ	4.0	- 0.9	71	0	0
Մայիս	10.5	0.9	57	- 31	64
Յունիս	13.0	- 0.4	55	- 16	77
Յուլիս	16.9	- 0.2	55	11	125
Օգոստոս	17.8	1.1	50	17	166
Սեպտեմբեր	12.8	- 0.4	28	0	0
Յոկտեմբեր	10.0	3.0	72	22	144
Նոյեմբեր	1.2	- 0.3	57	16	139
Դեկտեմբեր	3.6	- 0.3	25	- 13	65
Միջին տարեկան	5.8	0.3	62	36	106

* 1961-1990թթ. Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (ՅՕԿ) կողմից ընդունված ստանդարտ ժամանակահատվածն է, որի միջին արժեքն ընդունվել է որպես նորմա:

Ծայրահեղ տաք ձմեռները ՀՀ-ի տարածքում

Նորմալ և ամենամոն ձմեռային սեզոնի գնահատականը բնորոշվում է միջին քառակուսային շեղումներով: Միջին ջերմաստիճանի շեղումները տվյալ սեզոնի համար նորմայից 0.5°C -ի սահմաններում համարվում է նորմալ, $0.6-1.5^{\circ}\text{C}$ -ով՝ համապատասխանաբար տաք և ցուրտ, $1.6-2.0^{\circ}\text{C}$ -ով՝ շատ տաք և շատ ցուրտ, իսկ 2.0°C քացառապես տաք և ցուրտ:

ՀՀ տարածքում շատ տաք ձմեռներ են հանդիսացել $1940-41$, $1954-55$, $1980-81$, $1986-87$, $1996-97$ թթ. ձմեռները:

1962-63թթ. ձմեռն Արարատյան դաշտավայրի համար եղել է քացառապես տաք, իսկ առանձին շրջանների համար՝ շատ տաք: Քացառապես տաք սեզոն է հանդիսացել նաև $1965-1966$ թթ. ձմեռը՝ ջերմաստիճանի մասշտաբով և բարձր ֆոնով: Սեզոնի միջին ջերմաստիճանն ամբողջ շրջանում նորման գերազանցել է $4-5^{\circ}$ -ով, իսկ առանձին շրջաններում՝ 5.5°C -ով (Երևան, Բերդ), լեռնային շրջաններում կազմել է

$-2-6^{\circ}\text{C}$ (Աշոցք, Ամասիա), և $+2-+6^{\circ}\text{C}$ Արարատյան, Սյումերի և Վայոց ձորի դաշտավայրերում:

1998-99թթ. ձմեռը չի դասվում ծայրահեղ տաք ձմեռների շարքին: Երևանի համար այդ ձմեռը մտավ տաք ձմեռների դասի մեջ: Տեղումների քանակությունն եղել է նորմայից բավականին ցածր: Կատկապես չորային են եղել Արարատյան, Զանգեզուրի դաշտավայրերի, Փամբակի շրջանները, որտեղ տեղումները կազմել են նորմայի 20-35%-ը: Նորմայից մոտ երկու անգամ պակաս տեղումներ են գրանցվել լեռնային շրջաններում (Ապարան, Ֆոնտան, Ձերմուկ, Գյումրի):